

Առաջարկներ Ներկայացնելու Հրավեր (ԱՆՀ)

Երկիրը՝ **Հայաստանի Հանրապետություն**

Ծրագրի անվանումը՝ **«Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում վարկային ծրագիր»**
Փոխառության No.՝ **5222-ԱՄ**

Պայմանագրի անվանումը՝ **«ՀՀ Արարատի մարզի Արտաշատ ԲԿ վերանորոգում»**
Պայմանագիր No.՝ **CR4/NCB/B-W/005-16**

1. Հայաստանի Հանրապետությունը ստացել է վարկ Համաշխարհային բանկից «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222-ԱՄ վարկային ծրագիրն իրականացնելու համար և մտադիր է այդ միջոցներից մի մասն ուղղել **«ՀՀ Արարատի մարզի Արտաշատ ԲԿ վերանորոգում» CR4/NCB/B-W/005-16** պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու համար:

2. ՀՀ ԱՆ «Առողջապահական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ» ՊՀ (ԱԾԻԳ ՊՀ) հրավիրում է մրցույթի իրավասու մասնակիցներին մրցութային առաջարկներ ներկայացնել հետևյալ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար՝ **հիվանդանոցային մասի երկհարկանի և եռահարկ գոյություն ունեցող մասնաշենքերի վերակառուցում՝ 6950 քմ մակերեսով և 2 ջրի ռեզերվուարների և պոմպակայանի կառուցում, գոյություն ունեցող կաթսայանատ վերակառուցում, թթվածնի 2 ռամպաների կառուցում՝ ներառյալ տարածքի բարեկարգում և այլ աշխատանքներ:**

3. Մրցույթն անց է կացվելու **Ազգային մրցութային սակարկությունների (ԱՄՍ)** ընթացակարգի համաձայն, որը սահմանված է Համաշխարհային Բանկի ուղեցույցներում՝ *«Ապրանքների, աշխատանքների, և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ԶՎՄԲ-ի փոխառությունների և ՄՁԸ-ի վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի փոխառությունների կողմից»* (2011թ. հունվար, վերանայված՝ 2014թ. հուլիսին): Մրցույթը բաց է մրցութային փաստաթղթերով սահմանված բոլոր իրավասու մասնակիցների համար: Ի լրումն, խնդրում ենք ուշադրություն դարձնել 1.6 և 1.7 կետերի վրա, որով սահմանվում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Մրցույթի շահագրգիռ իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ **ԱԾԻԳ ՊՀ-ից (պրն. Հովակիմ Պողոսյան – գնումների մասնագետ, հեռ. (+37 10) 29-75-36, էլ.փոստ: procurement@healthpiu.am)** և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ներքո նշյալ հասցեով՝ աշխատանքային օրերին **Ժամը 09:30-ից մինչև 17:30 (երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ):**

5. Շահագրգիռ մասնակիցները կարող են ձեռք բերել մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը հայերեն լեզվով, ներկայացնելով գրավոր դիմում ներքոհիշյալ հասցեով և վճարելով **40,000 ՀՀ դրամ** չհատուցվող գումար: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը ներքոնշյալ հաշվին.

- ՀՀ Ֆինանսների նախարարության Կենտրոնական գանձապետարան- **900000902123** հայկական դրամային հաշիվ

Մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը կարող է անվճար բեռնվել նաև www.gnumner.am կայքից: Այնուամենայնիվ, ԱՕԻԳ ՊՀ պատասխանատու չէ վերոնշյալ կայքից սխալ կամ ոչ ամբողջական բեռնման, ինչպես նաև հետագայում մրցութային փաստաթղթերի փոփոխությունների առկայության դեպքում դրանց բացթողման համար:

6. Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով **2016թ. մայիսի 10-ին ժամը 10:00-ին (Երևանի ժամանակով)** կամ ավելի վաղ: Էլեկտրոնային եղանակով մրցութային առաջարկների ներկայացում **չի թույլատրվում**: Ուշացված մրցութային առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները կբացվեն բացմանը մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ **2016թ. մայիսի 10-ին ժամը 10:05-ին (Երևանի ժամանակով) ներքո նշված հասցեում**:

7. Մրցութային առաջարկները պետք է ուղեկցվեն **Մրցութային առաջարկի երաշխիքով**, որի գումարն է. **29,800,000 ՀՀ դրամ** (կամ համարժեք գումար ազատ փոխարկելի արտարժույթով):

8. Վերևում հիշատակվող հասցեն է.

ՀՀ ԱՆ «Առողջապահական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ» ՊՀ

Պրն. Նելսոն Զուլոյան, տնօրենի պաշտոնակատար

Պրն. Սմբատ Սմբատյան-ճարտարապետ/շինարար, շրջակա միջավայրի անվտանգության մասնագետ

Պրն. Հովակիմ Պողոսյան-գնումների մասնագետ

ՀՀ, Երևան 0051, Կոմիտասի պող. 49/4

Հեռ՝ (+37410) 297-536; 297-537; 297-538

Էլ. փոստ՝ info@healthpiu.am; procurement@healthpiu.am

Վեբ կայք՝ www.healthpiu.am